

**Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի 2019-2024 ռազմավարական ծրագրի
հիմնադրույթներ**

Մեր առաքելությունն է՝

**Արցախի Հանրապետության մարտահրավերների, առաջնահերթությունների և
առանձնահատկությունների հաշվառումով, ազգային արժեհամակարգի արժևորումով,
պատրաստել տեխնոլոգիաներին տիրապետող և աշխատաշուկայում մրցունակ կադրեր,
ունակ դիմագրավելու և լուծելու ազգային, սոցիալական և մասնագիտական
մարտահրավերները**

- Մեր արժեքներն են՝

Որակյալ կրթություն, ուսանողակենտրոնություն, համագործակցություն,
հաշվետվողականություն և թափանցիկություն, սոցիալական պատասխանատվություն,
ակադեմիական ազնվություն:

- Մեր տեսլականն է՝

Գիտության և կրթության նորագույն ձեռքբերումները օգտագործող, հետազոտություններով և
նորարություններով առաջնորդվող, երիտասարդության շրջանում ազգային ավանդույթները
պահպանող և տարածող գիտակրթական կենտրոն:

ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակը

**Տեղական և միջազգային աշխատաշուկայում պահանջված, ժամանակակից
տեխնոլոգիաներին տիրապետող, սոցիալական պատասխանատվությամբ և ազգային
արժեհամակարգով մրցունակ և բարձրորակ մասնագետների պատրաստմանը միտված
կրթական ծրագրերի իրականացում:**

Գործողությունները

- Ա. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային
վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի
պահանջներին համահունչ
- Բ. Կրթական ծրագրերի մշակման, արտոնման, մշտադիտարկման և վերանայման
քաղաքականությունների, ընթացակարգերի, կարգերի մշակում և կիրարկում:
- Գ. Կատարելագործել դասավանդման, ուսումնառության և գնահատման
գործընթացները:
- Դ. Կատարելագործել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների
գործունեության արդյունավետությունը և գործիքակազմը:
- Ե. Ուսումնական գործընթացում ակտիվացնել տեղեկատվական տեխնոլոգիաների
օգտագործումը, օգտագործելով նաև հեռավար ուսուցման տարրեր:

Ակնկալվող արդյունքներ

- Աշխատաշուկայում ուսանողների մրցունակության բարձրացում, գործատուների բավարարվածություն
- Ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման նորացված կանոնակարգային հենք
- Ուսանողակենտրոն դասավանդման մեթոդներ, վերջնարդյունքահեն գնահատում
- Կրթական ծրագրերի շարունակական կատարելագործման և բարելավման համակարգի առկայություն
- Դասավանդման արդյունավետության բարձրացում, հեռավար ուսուցման մեթոդների կիրառում:

Գիտության արդիականություն և փոխկապակցվածություն կրթության և աշխատաշուկայի հետ Նպատակը

Ունենալ արդիական հետազոտական ուղղություններ, ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը:

- Գործողություններ
- Ա. Համալսարանում հետազոտական առաջնահերթությունների սահմանում՝ գործընթացներում առաջին հերթին հաշվի առնելով համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ոլորտները և աշխատաշուկայի պահանջները
- Բ. ՊԴ կազմի գիտական գործունեության մասնակցության, հաշվետվողականության և արդյունավետության ընթացակարգերի, կանոնակարգեր, գործիքակազմի մշակում և կիրարկում:
- Գ. ՈւԳԸ աշխատանքների ակտիվացում, ուսանողերին գիտական աշխատանքներում ներգրավելու մեխանիզմների կիրառում
- Դ. Զարգացնել հետազոտական համագործակցությունը ԱՀ և ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի, միջազգային կազմակերպությունների, արտասահմանյան բուհերի և ձեռնարկությունների հետ
- Ակնկալվող արդյունքներ
- Աշխատաշուկայի և համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների փոխկապակցվածություն, համալսարանում գիտական աշխատանքների համակարգվածություն
- Գիտական աշխատանքներում ՊԴ կազմի մասնակցության ակտիվացում և արդյունավետության բարձրացում

- Գիտական աշխատանքներում ուսանողների մասնակցության ակտիվացում և արդյունավետության բարձրացում
- ԱՀ և ՀՀ գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի, միջազգային կազմակերպությունների, արտասահմանյան բուհերի և ձեռնարկությունների հետ գիտահետազոտական աշխատանքների իրականացում

**Ֆինանսական կայունություն և ենթակառուցվածքների համապատասխանություն
Նպատակը**

Ապահովել Համալսարանի ֆինանսական կայուն և բազմազանեցված հոսքերը և բարձրացնել դրանց կառավարման արդյունավետությունը, ձևավորել ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքներ

Գործողություններ

- Ա. Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները
- Բ. Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր
- Գ. Զարգացնել Համալսարանի ֆինանսական պլանավորման համակարգը, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը:
- Դ. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ լսարանային, լաբորատոր պայմանները, արդիականացնել համալսարանական ենթակառուցվածքները:
- Ե. Զարգացնել ուսումնագիտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական համակարգերն ու գրադարանային ենթակառուցվածքները:

Ակնկալվող արդյունքներ

- Ֆինանսական հոսքերի բազմազանություն և ավելացում, ձգտելով բյուջեի հավասարակշռության
- Ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում և թափանցիկության ապահովում
- Ժամանակակից տեխնիկական միջոցներով հագեցած և արդյունավետ ուսումնական միջավայր ապահովող ռեսուրսների առկայություն
- Ուսումնական գործընթացում տեղեկատվական համակարգերի ակտիվ կիրառում, արդիականացված գրադարանային ծառայություններ

**Արդյունավետ կառավարում և որակյալ մարդկային ռեսուրսներ
Նպատակը**

Բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության

**և թափանցիկության բարձրացմանը, ապահովել մարդկային ռեսուրսների շարունակական
զարգացումը**

• Գործողություններ

- Ա. Կատարելագործել համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերը՝ ապահովել համահունչությունը միջազգային և ազգային իրավական ակտերին և համալսարանի ռազմավարությանը
- Բ. Ամբիոնների, դեկանատների և այլ ստորաբաժանումների կազմակերպակառավարչական կարողությունների հզորացում
- Գ. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը
- Դ. Մշակել և ներդնել վարչական, ուսումնաօժանդակ, դասախոսական կազմի տարակարգերի աշխատողների վերապատրաստման և ատեստավորման համակարգ
- Ակնկալվող արդյունքներ
- Ապահովել համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի արդիականությունը և համահունչությունը
- Կառուցվածքային ստորաբաժանումների կոմպետենտության և մրցունակության բարձրացում
- Որակավորում կամ վերապատրաստում անցած դասախոսական կազմ (80%)
- Անձնակազմի մասնագիտական առաջընթացի կազմակերպման արդյունավետ մեխանիզմների կիրարկում

Միջազգայնացման շարունակական զարգացում

Նպատակը

**Նպաստել միջազգայնացման շարունակական զարգացմանը, ակտիվացնել փոխանակման
ծրագրերը, ակտիվացնել համագործակցային հարաբերությունները**

• Գործողություններ

- Ա. Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:
- Բ. Ստեղծել հրավիրյալ դասախոսների ինստիտուտ
- Գ. Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը
- Դ. Միջազգային դրամաշնորհային և փոխանակման ծրագրերի մասնակցություն պոտենցիալի գնահատում և քայլերի ձեռնարկում
- **Ակնկալվող արդյունքներ**
- Մշակել միջազգայնացման գործող հայեցակարգ
- ՀՀ և արտասահմանյան դասախոսների ներգրավում դասավանդման գործընթացում

- ՀՀ և արտասահմանյան բուհերի հետ պայմանագրերի կնքում և համատեղ միջոցառումների իրականացում
- Դրամաշնորհային և փոխանակման ծրագրերի մասնակցության հնարավորության բացահայտում

Հասարակական պատասխանատվություն և փոխգործակցություն

Նպատակը

Զարգացնել հասարակայնության հետ կապերն ու սոցիալական պատասխանատվությունը, ակտիվացնել համազգային նշանակության միջոցառումներին համալսարանի մասնակցությունը

Գործողություններ

- Ա. Պետական, մասնավոր, ՀԿ և միջազգային սեկտորի շահագրգիռ կողմերի հետ արդյունավետ փոխհամագործակցության մեխանիզմների ապահովում
- Բ. Ընդլայնել և զարգացնել համալսարանի ներգրավումը համազգային ծրագրերին ու նախաձեռնություններին, բազմազանեցնել հանրությանը մատուցվող ծառայությունները
- Գ. Հասարակությանը ծառայության մատուցում՝ շարունակական կրթության ծրագրերի և խորհրդատվական ծառայություններ տրամադրման միջոցով
- Դ. Ազգային լավագույն ավանդույթների, Գրիգոր Նարեկացու հոգևոր ժառանգության ներդրումը կրթադաստիրակչական գործընթացներում:

Ակնկալվող արդյունքներ

- Համալսարանի ու պետական, մասնավոր, ՀԿ և միջազգային սեկտորի հետ փոխշահավետ և արդյունավետ ծրագրերի իրականացում
- Համազգային ծրագրերի ու նախաձեռնությունների լուծմանն ուղղված միջոցառումներին համալսարանի մասնակցության ապահովում
- Բուհ – հասարակություն կապի ամրապնդում, շարունակական կրթության և խորհրդատվական ծառայությունների կատարելագործում
- Ազգային ավանդույթները կրող, Գրիգոր Նարեկացու հոգևոր ժառանգության արժևորող և հասարակական պատասխանատվությամբ քաղաքացիների պատրաստում: